



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

16 մարտի 2021թ. թիվ 327

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 276 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ  
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2021 թվականի մարտի 15-ի թիվ 02/45.7/8002-2021 գրությունը՝  
 Հ Ր Ա Մ Ա Ն

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 276 հրամանի հավելվածի «4.1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Թումանյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն», «4.2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Սպիտակի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն», «4.3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Ստեփանավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն», «4.4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Տաշիրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն» առանձնացված ստորաբաժանումների գործունեությունը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
 ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
 ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

3/16/2021

X 

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. մարտի 16  
 ք.Վանաձոր